19.10-23.10.2013

Ուսումնահայրենագիտական ճամփորդության ծրագիր

Օր 1

Վաղ առավոտյան (6:00) Երևանից կուղևորվենք դեպի Բավրա՝ հայ-վրացական սահման: Կանցնենք Գյումրիով, ապա կհատենք սահմանը և կմտնենք Ջավախք:Ախալցխայում կարճատև հանգստից հետո կմեկնենք վրաց-թուրքական սահման: Հատելով սահմանը՝ կանցնենք Արսեան կոչվող գեղեցիկ լեռների և անտառների միջով և կհասնենք Կարս (15:00): Կարսում շրջայց կկատարենք, կտեսնենք Վարդանի միջնադարյան կամուրջը, Եղիշե Չարենցի տան ավերակները, Սբ. Առաքելոց եկեղեցին (10-րդ դար), Կարսի բերդը, որը ժամանակին հայոց մայրաքաղաքի միջնաբերդն էր՝ Բագրատունիների թագավորանիստը: Գիշերը կանցկացնենք Սարիղամիշի հյուրանոցում:

Օր 2

Առավոտյան (7:30) կուղևորվենք դեպի Վան: Իգդիրից Դողուբայազիթ (Բայազեդ) քաղաք տանող ճանապարհին կտեսնենք Արարատ լեռը հակառակ (հարավային) կողմից: Անցնելով Թոնդրակի լեռնանցքը (Ծաղկանց լեռնաշղթա)՝ մենք կհայտնվենք Վասպուրական աշխարհում: Վանում (12:00) կայցելենք ուրարտական Տուշպա-Վան բերդ (9-րդ դար մ.թ.ա.), ուր պահպանվել են Սարդուրի և Երևանը հիմնող Արգիշտի արքաների տպավորիչ սեպագրերը և դամբարանը: Կմտնենք Խորգոմ՝ Արշիլ Գորկու ծննդավայրոում: Հասնելով լիճ՝ կնավարկենք դեպի Աղթամար, ուր գտնվում է Սուրբ Խաչ եկեղեցին (10-րդ դար): Աղթամարում կհանգստանանք և կվայելենք Վանա լճում լողալու հաճույքը: Հետո կգնանք Գևաշ գյուղում, կտեսնենք Սուրբ Թովմասի եկեղեցին: Կհամտեսենք նաև հայտնի Վանա տառեխ ձուկը, որը լճում ապրող միակ ձուկն է: Գիշերակացը՝ Վանի հյուրանոցում:

Օր 3

Առավոտյան (8:00) Վան քաղաքի միջով անցնելիս կանգ կառնենք «Սասնա Ծռեր» էպոսի Փոքր Մհերի ժայռափոր դռան մոտ: Վանից հետո կուղևորվենք դեպի Բայազետ: Ճանապարհին կանգ կառնենք և կհանգստանանք գեղատեսիլ Բերկրիի (Մուրադիյե) ջրվեժի մոտ: Ժամանելով հին Բայազետ կտեսնենք Արշակունյաց Դարոյինք անառիկ ամրոցը (1-5-րդ դդ.), կայցելենք նաև Իսհակ փաշայի շքեղ պալատ (17-18-րդ դդ.). մի համալիր, ուր տեղ են գտել պալատներ, հրապարակներ, մզկիթներ, որոնցում միահյուսված են պարսկական, արաբական և հայկական ճարտարապետական ոճերը: Այստեղից կմեկնենք առասպելական Անի, (9-11-րդ դդ.)՝ հազար ու մի եկեղեցիների քաղաք: Շրջելով Անիում՝ կտեսնենք միջնադարյան զորեղ պարիսպներ և աշտարակներ, շքեղ տաճարներ (Մայր Տաճար, Սբ. Ամենափրկիչ, Տիգրան Հոնենց, Գագիկաշեն, Սբ. Առաքելոց) և պալատներ, որոնք հազարամյակ անց կանգուն են մնացել:
Գիշերակացը՝ Կարսի Sim Er հյուրանոցում:

Օր 4
Մինչ վերադառնալը կայցելենք Արդահան քաղաք, որը գնվում է Քուռ գետի վերին հոսանքում՝ պատմական Գուգարք աշխարհի համանուն գավառում: Այստեղի հինավուրց

բերդը եղել է հայ, ապա վրաց Բագրատունիների տիրույթ, 16-րդ դարից անցել է օսմանցիների ձեռքը, իսկ 19- րդ դարում այն գրավել են ռուսները: Արդահանից դուրս գալով՝ կշարժվենք դեպի թուրք-վրացական սահման: Վրաստան կմտնենք, կանցնենք Ախալցխայով և Ախալքալաքով և կհատենք վրաց-հայկական սահմանը: Ապա կանցնենք Գյումրիով և երեկոյան կժամանենք Երևան (20:00-22:00):